




Հ. Մ. Ը. Մ.



ԵՐՈՒՍԱՂԷՄ — ՀԱՅՖԱ

ԱՄՍՕՐԵԱՅ ԶՐԶԱԲԵՐԱԿԱՆ

ԹԻԻ 2

ՓԵՏՐՈՒՍԲ

1938

ԵՐԿՈՒ ԽՕՍԶ

ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔ

Ճատեր մարզանք ըսելով կը հասկնան Ֆուլթոլը, Պասկէթ-պոլը կամ ասոնց նման ուրիշ խաղերը միայն, և հետեւաբար՝ կը խորհին թէ մարզիկ մը ըլլալու համար պէտք է անպայմանօրէն հետեւիլ այս խաղերէն մէկուն կամ միւսին:

Բոլոր խաղերն ալ մարզանքներ են անշուշտ. խաղի ընթացքին մեր մարմինները ինքնաբերաբար ենթարկելով զանազան շարժումներու, արդէն իսկ կատարած կ'ըլլանք այն՝ ինչ որ կը կոչենք մարզանք. զի մարմնական ամէն մէկ շարժում մարզանք մըն է ինքնին:

Այս խաղերէն շատերը ծանր և յոգնեցուցիչ ըլլալով՝ բնականաբար չեն կրնար տանելի ըլ-

լալ ամէն անհատի համար հաւասարապէս: Սակայն, բացի խաղերէն, մարմնակրթութեան բազմապիսի այլ ձեւեր ու մեթոտներ գոյութիւն ունին, որոնցմէ ամենէն աւելի թելադրելին է վազքը, որ ինքնին ամբողջութիւնն է շատ մը տեսակ մարզանքներու:

Իսկ այնպիսիներուն համար՝ որոնք ժամանակ և միջոցներ չունին հետեւելու դաշտային այս խաղերէն կամ մարզանքներէն որեէ մէկուն, թելադրելի է մարզական առաաձնայատուկ ուրիշ դրութիւններու կիրառութիւնը, ինչպէս օրինակ՝ բացօդեայ վայր մը կամ գէթ բաց պատահանի մը առջեւ կատարումը շուէտական մարզանքի և մարտը օդի շնչառութեան, որոնք կանոնաւորապէս և տեսաբար կատարուած պարագային՝ մեծապէս կը նպաստեն ենթակային ֆիզիքական կրթութեան:

Անուրանալի է արդարև մար-
զանքի ունեցած բարոյացուցիչ
ազդեցութիւնը պատանիին ինչպէս
Ֆիդիքական նոյնպէս նաև հոգե-
կան և բարոյական շինութեան
գործին մէջ: Այն պատանին կամ
երիտասարդը, որ մէյ մը ըմբռնու-
նած է ազատ բնութեան ծոցին
մէջ իր ծծած մաքուր օդին և
կատարած խաղերուն վայելքը,

ա՛լ չի փնտեր հասարակական
ապականած մթնոլորտն ու սայ-
թաքեցուցիչ միջավայրերը:

Մէկէ շատ աւելի են մարզանքի
օգուտները: Անոր շնորհիւ է որ
անհատը կը տիրանայ ո՛չ միայն
առողջ մարմնի մը — մարդկային
ամենաթանկագին այս հարստու-
թեան — այլ և ազնիւ հոգիի մը
և յստակատես մտքի մը:

*

ՄԱՍՆԱՃԻԿԻՍ ԿԱԶՄՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ

(ԱՍՓՈՓ ՆԻՇԵՐ)

Խումբ մը մարզասէրներու
ջանքերով՝ 1935 Մայիս 5 ին
հիմնուեցաւ Հ.Մ.Բ.Մ. ի Երուսա-
ղէմի Մասնաճիւղը, այդ նպատա-
կով յատկապէս զումարուած ժո-
ղովի մը մէջ, որուն կը մասնակ-
ցէին 46 պատանիներ և երիտա-
սարդներ:

Սկզբնական քանի մը ամիս-
ներու ընթացքին իսկ, շնորհիւ
Հ.Մ.Բ.Մ.ի վայելած համագաղու-
թային համբաւին և նորընտիր
Վարչութեան յայտնաբերած ժրա-
ջան գործունէութեան, Միութեանս
դրօշին տակ հաւաքուեցան քա-
ղաքիս մարզիկներու և մարզա-
սէրներու ընտրանին, անդամներու
թիւը բարձրացնելով 90-ի: Մա-
կայն, վրայ հասնելով լրիւ վեց

ամիսներ տեւող Պաղեստինի ընդ-
հանուր գործադուլը, Մասնաճիւ-
ղիս գործունէութիւնը ամլութեան
դատապարտուեցաւ, տիրող քաղա-
քական ծանր կացութեան պատ-
ճառաւ արգիլուած ըլլալով որևէ
հաւաքոյթ կամ հաւաքական գոր-
ծունէութիւն:

Երբ երկիրը վերստացաւ իր
բնականոն վիճակը, անմիջապէս
զումարուեցաւ երկրորդ ընդհանուր
ժողով մը, ուր ընտրուեցաւ նոյն-
պէս նոր Վարչութիւն մը, որ ար-
դիւնաւոր գործունէութեան մը վառ
յոյսերով գործի լծուեցաւ իբրև
խրախոյս ունենալով բոլոր ան-
դամներու համագործակցութեան
խոստումը:

Եւ իրապէս եռանդուն գործունէութեան շրջան մը եղաւ 1936-1937 տարեշրջանը: Այդ շրջանին էր որ Միութիւնս ունեցաւ իր գործունէութեանց յարմար սրահ մը, նախորդ ոչ այնքան յարմար ակումբէն յետոյ: Նոյն շրջանի սկիզբներուն էր նոյնպէս որ կազմուեցաւ Մասնաճիւղիս սկստական խումբը՝ բաղկացած 21 հոգիէ: Մարքուեցան քանի մը հանդէսներ, որոնք միշտ ալ ժողովրդական լայն ընդունելութեան արժանացան, ապահովելով կոկիկ գումարներ: Այս շրջանի գանազան ձեռնակներէ գոյացած հասոյթին ընդհանուր գումարը հասաւ 161 Պաղ. ոսկիի, որը ըստ բաւականի յատկացուեցաւ Մասնաճիւղիս բազմածախս կարիքներուն:

Նոյն շրջանի Վարչութեան հեռատես գործունէութեան և բոլոր անդամներուն զոհաբերող ոգիին շնորհիւ էր որ Մասնաճիւղս օժտուեցաւ այսօր Ծութպոլի և Պասկէթպոլի սրահներէ զոյգ խաղավայրերով, որոնք կրնան նախանձը շարժել օտար մարզական միութեանց:

Կր մնայ լաւագոյնս օգտագործել այս խաղավայրերը, գործունէութեանց աւելի լայն հորիզոններ բանալով և արթնցնելով խաղի ու մարզանքի սէրը՝ նորահաս սերունդին մէջ:

Հ. Մ. Բ. Մ. — ՀԱՅՖԱ.

(ԸՆԳՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ)

1. ԿՂՋՄՈՒԹԻԻՆ - Մասնաճիւղիս կազմութիւնը եղած է Մարտ 1937ին, չափազանց դժուարին պայմաններու տակ: Մէկ կողմէն անոր նախապէս կազմուած ու կազմալուծուած քլաւուն անպատեհութիւնը, միւս կողմէն մեր գաղութին ջախջախիչ մեծամասնութեան ակնյայտնի անբարեացակամութիւնը, պատճառ դարձան անոր ուռճացման դանդաղելուն: Բայց և այնպէս, իր վարիչներուն անվերապահ զոհաբերութիւնը, իր հիմնադիր անդամներուն պատրաստակամ և եռանդուն գործակցութիւնը առժամեայ վարչութեան, ինչպէս նաև անմիջականօրէն տեղի ունեցած լուրջ ու փայլուն ձեռնարկները յաղթահարեցին ամէն արգելքի: Եւ այսօր, Հայֆայի մէջ, Հ. Մ. Բ. Մ. ը ունի իր պատուոյ տեղը և եռանդով նուիրուած է հասարակական իր կոչումը արդարացնելու աշխատանքին:

2. ԱՆԳԱՄԱԿԱՆ - Հիմնադիր առաջին ժողովը տեղի ունեցաւ 18 հոգիի ներկայութեան: Գաղութիս համար աննշան այդ թիւը սակայն աստիճանական կերպով աւելցաւ: Շարք առ շարք երիտասարդութեան ընտրանին դիմեց դէպի Հ. Մ. Բ. Մ., անոր մէջ տեսնելով իր ցեղին առաքինութեանց հայելին: Բարեբախտաբար սակայն, վարչութիւնները՝ որոնք ցարդ գործեցին, եղան չափազանց շրջահայեաց անդամներու ընտրութեան մէջ, Հ. Մ. Բ. Մ. ը և իր ակումբը շարձնելու համար զբօսա-

վայր մը: Հակառակ սակայն կամաւոր այս սեղմումին, ան այսօր իր մէջ կը համրէ աւելի քան 75 անդամներ, ինչ որ ինքնին արհամարհելի թիւ մը չէ Հայֆայի համար:

3. ՄԱՐՄՆԱԿԻԹԱԿԱՆ - Մեր տըրաքը առողջ ու կորովի մեծցնելու համար մեծ ուժ տրուած է մարմնակրթանքի այլազան ճիւղերէն մէկ քանիին, հնարաւորութենէ զուրկ ըլլալով կիրարկել զայն իր շատ լայն չափերուն մէջ: Գլխաւոր տեղը բռնած է անշուշտ «խաղերու թագաւոր»-ը: Փորձերը տեղի ունեցած են կանոնաւորաբար երբ օդերը ձեռնտու եղած են այդ բանին: Մասնագիտական տեսակէտով՝ տարբերութիւնը դէպի լաւ մեծ է տողց քով: Քիչ մը աւելի եռանդ եւ ազատ գործունէութեան քիչ մը աւելի ձեռնտու պայմաններ, եւ արդէն մենք կարող ենք ունենալ քաղաքիս տիպար խումբերէն մին:

Զուժպոլին զուգընթաց՝ տեղի ունեցած են նաեւ շուէտական մարզանք եւ վազքի ու ցատկելու փորձեր: Այս փորձերուն միայն պարտական են մեր տղաքը՝ խաղերու մէջ իրենց յայտնաբերած տոկունութիւնը:

Մարմնակրթանքը հաճոյքի ձեւին տակ կիրարկուած է ակումբէն ներս, Բինկբոնկով: Ակումբի բացումին մատի վրայ կը համրուէին բաքէթը բռնել գիտցողները, իսկ այսօր, շնորհիւ ընձեռնուած դիւրութեանց, արդէն ունինք լաւ խաղացողներու հոյլ մը եւ բաւական ընդարձակ թուով յուսատու խաղացողներ: Շատ մօտ ատենէ մը պիտի կազմակերպուին արտյեանական մըրցումներ՝ միայն անդամներու միջեւ:

4. ԶԵՒՆԱՐԿՆԵՐ - Իր անդամները, իր համակրական շրջանակը, ինչպէս նաեւ առհասարակ մեր զաղութը սերտ շփման մէջ դնելու համար Հայ ոգիին հետ, Հ. Մ. Ը. Մ. քարդ կազմակերպեց բազմաթիւ ու այլազան հանդէսներ, որոնք եղան մին միւսէն աւելի յաջող: Ժողովուրդը, նախ շատ վերապահ, յետագային սակայն սկսաւ աւելի մեծ թիւերով յաճախել մեր հաւաքատեղիները: Այնպէս որ, Հ. Մ. Ը. Մ. ական ռեւէ ձեռնարկ, դարձաւ տեսակ մը ձեռնարկը մեր ժողովուրդին: Աւելորդ չէր ըլլար յիշատակել գլխաւորները միայն մեր յաջողութեանց «Ապրիլ 24», «Մայիս 28», «Աշխարհի Գատաստանը», «Գեղարուեստական Յերեկոյթ», «Գրական Երեկոյթ», եւն. եւն.:

5. ՎԱՐՉԱԿԱՆ - Մինչեւ հիմայ գործած են երկու վարչութիւններ, մին առժամեայ, հիմնադիր անդամներէն ընտրուած, 3 ամսուայ գործունէութեան շրջանով: Երկրորդը՝ ներկայ վարչութիւնն է, ընտրուած անդամական օրինաւոր ժողովէն, ասկի 6 ամիսներ առաջ: Յարդ տեղի ունեցած էն վարչական 37 նիստեր, միշտ եղբայրական մթնոլորտի մէջ: Հարցերը քննուած են հնարաւոր լրջութեամբ եւ կարելի շրջահայեցութեամբ, Միութեան ապահովելով գործունէութեան արդիւնաւոր շրջան մը:

6. ԿԱՊԵՐ - Կղզիացած չմնալու համար, սերտ կապ պահած ենք Երուսաղէմի մեր մասնաճիւղին, Կաֆայի «Կամք»-ին եւ քաղաքիս արաբական խումբերու հետ: Օրինական կապերով միացած ենք նաեւ Շրջն. վարչու-

թեան, զայն ժամանակ առ ժամանակ տեղեակ պահելով մեր նիւթական եւ բարոյական կացութեան: Գժբախտաբար հնարաւոր չեղաւ կապուիլ նաեւ Սկաուտական Գերագոյն Խորհուրդին, մեզի անծանօթ պատճառներով: Հարցը փոխանցուած է Շրջանային վարչութեան:

Յարդ զրկուած են 123 նամակներ ու շրջաբերականներ: Ստացուած են գրեթէ նոյնքան նամակներ ու շրջաբերականներ: Երկու տեսակներն ալ պահուած են առանձին թղթածրարներով:

7. ՆԻԻԹԱԿԱՆ - Միութեան զԸԼԽաւոր ցաւը, մտահոգութեան առարկան եւ աշխատանքի իր անօրինակ թափը անողքաբար կասեցնողը եղած է նիւթական դժուարութիւնը: Ակումբը կը պահանջէ տարեկան 84 Պ. ոսկի: Միւս կողմէ, անոր սրահին անբաւարար մեծութիւնը պատճառ դարձած է յաւելուածական 30 ոսկի ծախքի մը: Երախք կը պահանջէ նաեւ մարզարանը: Ասոնց քով նաեւ յարակից ու աննախատեսելի ծախքեր, Միութեան ելքը կը բարձրացնեն մօտ 150 ոսկիի: Էւ ըսել որ ասոր դիմաց ան ունեցած է մի միայն իր անդամատուրքերը եւ այլազան ձեռնարկներէ գոյացած հասոյթներ: Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ թափուած աշխատանքը իր գնահատանքը գտած կ'ըլլայ կարծեմ, եթէ ըսուի որ Միութիւնը տարին կը բոլորէ առանց միլ մը պարտքի:

8. ԲԱՐՅԱԿԱՆ - Տաժանելի եւ յոգնասպառ տարի մըն է որ կը բուրբուրի: Բայց ձեռք ձգուած արդիւնքը աւելի կը գեղեցկանայ ու կ'անուշնայ

անով: Բացորոշ յաջողութիւններ արձանագրուած են, եւ անոնց մէջ մեծ դեր ունին Միութեան անդամները, որոնք ամէն վայրկեան նեցուկ կանգնեցան վարչութեան, աշխատանքը բաժնելով անոր ու իրենց միջեւ: Տարի մը եւս այս թափով, եւ արդէն կատարուած կ'ըլլայ վերջնական նըւաճումը:

9. ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ - Կատարուած գործը վերջնական արտայայտութիւնը չէ Հ. Մ. Ը. Մ. ին: Աւարտած չէ իր աւաքելութիւնը: Գեռ անժամանակ է հանգստութեան մասին մտածելը: Ժողովուրդը դեռ շատ բան կը սպասէ Միութենէս: Ու մենք սպահովաբար կրնանք ըսել որ նոր շրջանին աւելի մեծ գործեր պիտի կատարէ ան, իրական գետնի վրայ դնելով միութենական իր նշանաբանը. «Բարձրացի՛ր, Բարձրացի՛ր»:

Հայֆա Բ Ա Զ Է

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Կազմակերպուած Հ.Մ.Ը.Մ.ի Հայֆայի Մասնաճիւղին կողմէ: Հրապարակ հանուած են 500 տոմսեր, որոնցմէ 50ը պիտի շահին արժէքաւոր նուէրներ:

Գին՝ 49 միլ

Տոմսերը կը բաշտին ամսոյ 27ին եւ կը ծառային իբր մուտքի տոմս կազմակերպուած Բարեկենդանի Պարահանդեսին:

Տոմսերը ստանալ Հայֆայի եւ Երուսաղէմի վարչական անդամներէն:

ՄԱՐԶԱԿԱՆ

Ֆ Ո Ւ Թ Պ Ո Ւ

« ԱՌԱՔԵԼ ԲԱՒԻՍԱՐԵԱՆ ԲԱԺԱԿ »

Պաղեստինի մարզական կեանքին մէջ երջանիկ թուական մը պիտի մնայ Յունուար 23 ի Կիրակին, երբ, գովելի կարգադրութեամբ մը, տեղի ունեցաւ Ֆութպոլի միջնադարային մրցում մը, Հ. Մ. Բ. Մ. Երուսաղէմ ընդդէմ Հ. Մ. Բ. Մ. Հայֆա եւ « Կամբ » Եաֆա միացեալ խումբերուն:

Մասնաճիւղիս Պատուոյ Անդամ Եղբայր Առաքել Բախիսարեան, որ մարզական կեանքով մօտէն հետաքրքրուող և միշտ ալ քաջալերող մը եղած է, շատ գնահատելի ժեշտ մը ըրած էր՝ սոյն մրցումին յատկացնելով մասնաւոր բաժակ մը:

Հակառակ մուտքը վճարովի ըլլալուն, խումբ երկուսն բազմութիւն մը (շուրջ 1200 հոգի) ժամանակէն առաջ լեցուած էր խաղավայրին ըլլորտիքը:

Քիչ յետոյ, սկառտական եւ ազգային դրօշներով և Միութեանս քայլերգը հնչեցնելով՝ կը հասնէր Մասնաճիւղիս սկառտական խումբը, հսկելու համար օրուան կարգապահութեան:

Ժամը ճիշդ 3 ին, Իրաւարարի ազդանշանին վրայ, նախ Հայֆա ու Եաֆա միացեալ խումբը և ապա Երուսաղէմինը հանդիսաւոր մուտք կը գործեն դաշտէն ներս, ու, « կեցցէ » ներու փոխանակումէն եւ լուսանկարուելէն վերջ, կը սկսի խաղը՝ հանդիսականներու հետաքրքիր նայուածքին տակ:

Երկու խումբերն ալ օժտուած էին զօրաւոր յետսապահներով, որոնք միշտ ի դերեւ կը հանէին յառաջապահներու բոլոր ճիգերը: Հակառակ երկուստեկ եղած բուն յառձակումներու, առաջին կիսախաղը անցաւ ապարդիւն:

Երկրորդ կիսախաղին Երուսաղամի խումբը աւելի վճռական յարձակումներ սկսաւ գործել, եւ շատ չանցած նշանակեց առաջին կոլը: Երկրորդ և երրորդ կոլերը, շնորհիւ իր ի գործ դրած հաւաքական խաղարկութեան խաղը իր վախճանին կը մօտենար: Հայֆա-Եաֆա խումբին ճիգերն ալ պսակուեցան շատ յաջող կոլով մը, որ վերջինն էր, և խաղը վերջացաւ Երուսաղէմի խումբին յաղթութեամբ (3-1):

Խաղը իր ամբողջութեանը մէջ յաջող էր եւ օրինակելի: Ծատ փափաքելի է անշուշտ որ ուրիշ

առիթներով ևս ստեղծուին սոյն-
պիսի հանդիպումներ:

Սակայն առանց նկատողու-
թեան չենք կրնար անցնիլ տգեղ
երեւոյթի մը վրայէն, որ ամէն
խաղի մէջ յաճախակի կը կրկնուի:
Այլեւս ունակութիւն դարձած է
կարծես խաղի ընթացքին խօսիլը
եւ զիրար այպանելը, զորս այս
անգամ ի յայտ բերին երկու խում-
բերն ալ: Բան մը որ պատիւ չի
բերեր որևէ կանոնաւոր խումբի:
Այդ տեսակետով օրինակելի են
անգլիական խումբերը: Իրաւարա-
րին դէմ եղած աւելորդ խօսքերն
ալ անտեղի և տգեղ երեւոյթ-
ներ են:

*
**

Փետրուար 6ին ևս Հ.Մ.Ը.Մ.ի
Երուսաղէմի խումբը կատարեց նը-
շանակելի մրցում մը՝ ընդդէմ
քաղաքիա R. A. F. խումբին:

Հակառակ ցուրտին եւ քամիին՝
հանդիսատեսներու հոծ բազմու-
թիւն մը ներկայ էր:

Հովը բախտորոշ դեր կը կա-
տարէր այս մրցումին մէջ: Ա-
ռաջին կիսախաղին, հովին հան-
դիպակաց կողմն ըլլալով՝ մեր
պաշտպանողական գիծը բաւական
նեղուեցաւ: Սակայն Անգլիացիք
չկրցան օգտուիլ նպաստաւոր ա-
ռիթէն եւ առաջին կիսախաղը
անարդիւնք անցաւ:

Առանց դադարի՝ անմիջապէս
սկսաւ երկրորդ կիսախաղը, այս
անգամ սակայն նպաստաւոր կողմը
մեզի ձգելով: Մեր տղաքը չփախ-
ցուցուցին առիթը, և բուն յար-
ձակողականներով յաջորդաբար
նշանակեցին երկու կողեր:

Անգլիացուց ճիգերը արդիւնք
չտուին՝ բացի մեզի քաշուած վեր-
ջին թենալքիէն: Խաղը վեր-
ջացաւ ի նպաստ մեզի (2-1):

Խաղի մէջ աչքի կը զարնէր
մեր տղոց տոկունութիւնը, հա-
կառակ անոր որ անգլիացիք ա-
ւելի մարմնեղ եւ հուժկու էին:
Նկատելի էր նոյնպէս յառաջա-
պահներու նշանակելի յառաջդի-
մութիւնը՝ իրերհասկացողութեան
տեսակետով: Սակայն յառաջա-
պահ երկու թիւերու անվարժու-
թիւնը աչքի կը զարնէր:

Գ Ի Տ Ա Կ

ԳՈՎԵԼԻ ԶԵՆՆԱՐԿ ՄԸ

Փարիզէն կը տեղեկացնեն
մեզ, որ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր
ու գործօն անդամներու նախա-
ձեռնութեամբ՝ ծրագրուած է
կազմել Յանձնախումբ մը բաղ-
կացած Միութեան բոլոր մաս-
նաձիւղերուն ներկայացուցիչ-
ներէն, յառաջիկայ Նոյեմբերին
պատշաճ հանդիսաւորութեամբ
տօնակատարելու համար Հ.Մ.
Ը.Մ. ի հիմնարկութեան քսան-
ամեակը:

Յաջորդով կ'անդրադառնանք
առանձին:

ՉԱՐՉԱԿԱՆ

ԾԱՆՈՒՅՈՒՄ

Հ.Մ.Ը.Մ. ի Երուսաղէմի եւ Հայֆայի Մասնաճիւղերու Վարչութեանց համաձայնութեամբ՝ Շրջաբերական, ներկայ Թիւն սկըսեալ, պիտի պարունակէ զոյգ Մասնաճիւղերու վերաբերեալ գրութիւններ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.

Մասնաճիւղիս Երամօտայ ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ 20 փետր. 1938, Կիրակի կէսօրէ առաջ ժամը 9.30 Ին, Հ. Կ « Սիոն » Միութեան սրահին մէջ:

Քոչոր անդամներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

ԱՆԴԱՄԱՏԵՏՐՆԵՐ

Ինչ ինչ ղժուարութիւններու պատճառաւ ցարդ կարելի չէր հղած կարգադրել անդամատերներու խնդիրը: Սակայն ներկայիս արդէն տպագրութեան յանձնուած է եւ մօտաւոր ապագային իւրաքանչիւր անդամ պիտի ունենայ իր Անդամատերը: Առ այդ ամէն անդամ պէտք է պատրաստէ Երեք օրինակ փոքր լուսանկարներ (նամակադրօձմէն քիչ մը աւելի մեծ):

ՀԵՆՆԵԼԱՆԻՒՒ ՄՐՅՈՒՄ

Մարզական ցանձնախումբը մտադրած է յառաջիկայ Երեք ամիսներու ընթացքին կազմակերպել հեծելանիւի

միջանդամային մրցում մը՝ մօտաւորապէս 20. Քիչու՞նչըր երկարութեամբ շրջանի մը մէջ: Այս մարզին մէջ ընդունակ եղողներու ուշադրութեան կը յանձնուի այժմէն, որպէսզի սկսին կատարել իրենց փորձերը:

ԶԱՆԱԶԱՆՔ

Հ.Մ.Ը.Մ. Ի ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻՂ

Ամանի մէջ, ուր կայ փորրիկ Հայ գաղութ մը, 1937 Նոյ. 21ին հիմնուած է Հ.Մ.Ը.Մ. ի մասնաճիւղ մը, որուն կ'անդամակցին ներկայիս 17 հոգի: Ամիջապէս կազմուած է Ֆուժպոլի խումբ մը, որ կանոնաորապէս կը շարունակ ժարգուիլ՝ իր տրամադրութեան տակ ունենալով տեղւոյն գիւտորական խաղակայրը:

«ՊԱՍԿԵԹՊՈԼԻ ՖՅՆՏ» Ի ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ ՅԱՆԿԸ

	Միլ
Վահէ Ղազրեան	1.000
Առաքել Բախիսարեան	1.000
Ոմն	1.000
Յովհաննէս Պէրպէրեան	700
Կարապետ Յակոբեան	500
Լեւոն Բէշիշեան	440
Երուանդ Ասատուրեան	250
Եղուարդ Գոյաեան	250
Արամ Այվազեան	150
Վարդգէս Թոմպալազեան	150
Թորոս Տէր Թորոսեան	150
Յակոբ Պետրոսեան	150
Վահան Ղազարեան	100
Միսաք Սէրայտարեան	050
	<u>5.890</u>

Ստացանք Հ.Մ.Ը.Մ. ի Եգիպտոսի Շրջանի 1938 տարւոյ պատի օրացոյցները.

Գին՝ 5 Ե. դահ.